

Դպրոցի տնօրեն՝



Ք.Հովհաննիսյան

Դպրոցի փոխտնօրեն՝



Ա.Առաքելյան



2023-2024 ուսումնական տարի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ջովաբերի միջնակարգ դպրոց 12-րդ դասարան

Գ.Կոստանյան

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանի աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Աշակերտները հաճախում են դպրոց ժամանակին, պատրաստակամ են, նախաձեռնող:

2. Ուսումնա-դաստիարակչական նախադրվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ընթացքում հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների կարգապահության, պատասխանատվության և ակտիվության բարձրացմանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն):

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ(հնարավորության դեպքում): Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Կազմակերպել էքսկուրսիաներ եկեղեցիներ, վանքեր:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակության կարևորագույն խնդիրն է աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ, սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնել հոգևոր հարստություն, բարություն: Գիտակցական վերաբերմունք ձևավորել մշակույթի համաշխարհային արժեքների նկատմամբ: Դիտել ֆիլմեր, ներկայացումներ, կազմակերպել քննարկումներ կարդացած գրքերի վերաբերյալ: Այցելել թանգարաններ, տուն-թանգարաններ, պատկերասրահներ, Հայաստանի պատմամշակութային կոթողներ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը սկսվում է դպրոցից: Սովորողների մոտ ձևավորել սեր դեպի հայրենիք, դաստիարակել իրավագիտակից քաղաքացի: Հաշվի առնելով Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկությունները՝ մեծ ուշադրություն

դարձնել աշակերտների ռազմահայրենասիրական ոգու ձևավորմանն ու ամրապնդմանը, տղաներին հոգեբանորեն պատրաստել ծառայության:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը դպրոցում իրականացնում է հետևյալ խնդիրները՝ ա/աշակերտի ներդաշնակ ֆիզիկական զարգացում

բ/աշակերտի մեջ բարոյական բարձր հատկանիշների զարգացում գ/ֆիզիկական դաստիարակություն

Որպես կարգախոս ունենալ <<Առողջ մարմնում առողջ հոգի բանաձևը>>, առաջնորդվել ֆիզկուլտուրայի և սպորտի նկատմամբ ճիշտ վերաբերմունք ձևավորելու հրամայականով, խրախուսել սպորտով զբաղվողներին և հետևել նրանց հաջողություններին: Անցկացնել զրույցներ սպորտի կարևորության և անհրաժեշտության մասին: Հետևողական լինել ֆիզկուլտուրայի դասերին աշակերտների մասնակցությանը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակության միջոցով աշակերտների մոտ ձևավորել հմտություններ և կարողություններ, արժեքային համակարգ, սեր և պատասխանատվություն դեպի աշխատանքը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Պետք է կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները: Տարվա ընթացքում տեղեկանալ ծառատունկի և բնապահպանական ծրագրերի մասին, հնարավորության դեպքում մասնակցել դրանց:

4. Դպրոց-ընտանիք կապը

Աշակերտի դաստիարակության արդյունավետությունը կախված է դպրոց- ընտանիք համագործակցությունից: Դաստիարակությունը հաջողություն է ունենում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքն ու երեխայի դաստիարակությունը կատարվում է միաժամանակ: Դպրոցը երեխային տալիս է գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Ծնողներին հրավիրել դպրոցում կազմակերպվող միջոցառումներին:

5. Մասնագիտական կողմնորոշում

Մասնագիտության ընտրությունը կյանքի ամենապատասխանատու և որոշիչ քայլերից մեկն է: Այդ քայլերով է պայմանավորված հետագա մասնագիտական կյանքի հաջողությունը,

աշխատավայրում լիարժեքության, բավարարվածության և ներդաշնակության զարգացումը: Կատարել մասնագիտական ճիշտ ընտրություն՝ նշանակում է ընտրել այնպիսի մասնագիտություն, որն առավելագույնս համապատասխանում է սեփական ընդունակություններին, հետաքրքրություններին և անձնային առանձնահատկություններին: Աշակերիտի մասնագիտական ճիշտ կողմնորոշումը և հետագա ուսումնառության հաջողությունը մեծապես կախված է սովորողի ինքնագնահատականից: Մասնագիտական ճիշտ կողմնորոշման նպատակով աշակերտներին ծանոթացնել տարբեր մասնագիտությունների:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Ուսումնական շաբաթը
2023-2024 ուստարվա անելիքների քննարկում:	I
Կյանքի մի նոր փուլ է սկսվում:	II
Մասնագիտություններ, որ հետաքրքրում են ինձ՝անկախ Հայաստանի քաղաքացու:	III
Ինքնաճանաչում թեմայով զրույց քննարկում	IV
Ի՞նչ դառնալ կյանքում... Ամենամեծ պաշտոնը երկրի վրա:	V
«Հանդուրժողականություն» թեմայով քննարկում	VI
Արդյո՞ք բարձրագույն հաստատություն ավարտելը միշտ է բավարար կրթված լինելու համար:	VII
Ով չի սիրում իր երկիրը, ոչինչ սիրել չի կարող:	VIII
<<Հայաստան>> ասելիս աչքիս առաջ են գալիս...	IX
Արտագաղթը այսօրվա ամենամեծ չարիքն է ազգիս համար:Եկեք խոստովանենք, որ օտարության մեջ արևը կարծես չի քերմացնում:	X
Ընկան, որ ապրենք.. ...Եվ նրանց փառքը երբեք չի մեռնում, Ովքեր հայրենիքի համար են ընկնում:	XI
Ես պարտավոր եմ հայ հերոսներից ժառանգած հայրենիքը դարձնել հզոր ու անպարտելի:	XII
Ի՞նչ է պետք հզոր հայրենիք ստեղծելու համար:	XIII
Ձեռքդ տուի, միասին լուծենք բոլոր խնդիրները:	XIV
Միասնությունը տանում է դեպի ամուր ընտանիք ու հզոր հայրենիք:	XV
Եթե չես ուզում տառապել՝ մի՛ նախասնձիր:	XVI
Ի՞նչն է խանգարում ինձ՝ քեզ հասկանալ:	XVII
Ե՛կ հասկանանք իրար: Ինքնատիրապետման անհրաժեշտությունը:	XVIII
Երբ մեղավոր ես, <<ներողությունը>> բարձրացնում է անձդ, ոչ թե նվաստացնում:	XIX
Երախտիքի խոս՞ք ունես՝ ասա հենց հիմա, ի՞նչ իմանաս՝ գուցե վաղն արդեն ուշ լինի...	XX
Ներելը ուժեղին և մեծ հոգուն է բնորոշ:	XXI
Ամենասարսափելին նույն սխալը կրկնելն է և համառորեն այն չգիտակցելը:	XXII

Ի՞նչ է սերն ու նվիրվածությունը:	XXIII
Ինչպե՞ս եք պատկերացնում ձեր վերջին զանգը:	XXIV
Ի՞նչ եք սովորել դպրոցից. նշեք 3 ամենից կարևոր կետերը:	XXV
Զրույց պատմամշակութային կոթողների մասին	XXVI
Ստեղծագործել. գրել խոսքերը նվիրված ուսուցիչներին:	XXVII
«Կոնֆլիկտների հաղթահարում» թեմայով զրույց-քննարկում	XXVIII
«Երջանկությունն իմ պատկերացմամբ» թեմայով զրույց-քննարկում	XXIX
«Իմ կարողություններն ու ձեռքբերումները» թեմայով քննարկում	XXX
Պարի բեմադրում	XXXI
Հումորային համար	XXXII
Վերջին զանգի փորձ	XXXIII
Վերջին զանգ	XXXIV

